Հաստատում եմ ՀՀ ԱԻՆ
«Ճգնաժամային կառավարման
պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի
ռեկտոր Հ.Մաթևոսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար ***«ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-Տ-18/02»*** ծածկագրով գնանշման հարցման միջոցով տնտեսական, սանիհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի:

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Ավան Աճառյան 1 հասցեում 28 մարտի 2018թ., ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

1. Վահագն Կրբեկյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի արտակարգ իրավիճակների և ճգնաժամային կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ

Անդամներ՝

2. Լիլիթ Սահակյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կադրերի գծով տեսուչ
3. Լիլիթ Վարդանյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կրտսեր մեթոդիստ

Քարտուղար՝

4. Ռուզաննա Մկրտչյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի գնումների գծով մասնագետ

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-Տ-18/02» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1 ***«ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-Տ-18/02»*** ծածկագրով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, և մասնակցի ֆինանսական միջոցները համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2 Ընտրված մասնակիցը սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է հրավերով պահանջված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը :

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

2.1 ***«ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-Տ-18/02»*** ծածկագրով ընթացակարգի **1-ին. 2-րդ. 3-րդ. 4-րդ. 5-րդ և 6-րդ** չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել **«Պրովայդեր» ՍՊԸ-ին :**

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է)

2.3 Համաձայն «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

2.4 ***«ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-Տ-18/02»*** ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ դրան հաջորդող աշխատանքային օրը):

Հանձնաժողովի նախագահ՝
Վ.Կրբեկյան _____

Անդամներ՝
Լ.Սահակյան _____

Լ.Վարդանյան _____

Քարտուղար՝ Ռ.Մկրտչյան _____